



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
2406/02/15թ.

Քաղաքացիական գործ ԸԻԴ N

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2406/02/15թ.

Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան

Դատավորներ՝

Հ.Աբրահամյան

Հ.Խաչատրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ
հունիսի 2016թ.

22

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ի.Կարապետյանի

Գ.Արզումանյանի

Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի <<ՌԵՍՈ>>
ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Սամվել
Համլետի Հարությունյանի՝ 684.225 ՀՀ դրամ գանձելու մասին
քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի
ապրիլի 27-ի որոշման դեմ <<ՌԵՍՈ>> ապահովագրական փակ
բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սամվել Գրիգորյանի
վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

<<ՌԵՍՈ>> ապահովագրական փակ բաժնետիրական
ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/, հայց հարուցելով դատարան,
խնդրել է Սամվել Համլետի Հարությունյանից գանձել 684.225 ՀՀ դրամ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի
/այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ 2016 թվականի հունվարի 15-ի
որոշմամբ Արտակ Թարանյանը սույն գործով ներգրավվել է որպես վեճի
առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝
հայցվոր կողմում, իսկ Բորիս Հարությունյանը՝ որպես վեճի առարկայի

նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ պատասխանող կողմում:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 10-ի վճռով հայցը բավարարվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Սամվել Հարությունյանի ներկայացուցիչ Յուրա Դանիելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 10-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել, Ընկերության հայցը մերժվել է:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության գործադիր տնօրեն Ս.Գրիգորյանը, որը Գերագույն դատարանի 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 49-րդ և 121-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 436-րդ, 989-րդ հոդվածները, կիրառել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1015-րդ հոդվածը, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանների» /ԱՊՊԱ Պայմանների/ 9.1.2 կետի «դ» ենթակետը, 10.1, 10.2 և 10.4 կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ընկերությունը 27.01.2014թ. ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր /ԱՊՊԱ պայմանագիր/ է կնքել սույն գործով պատասխանող Սամվել Հարությունյանի հետ՝ ապահովագրելով վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես Բենց» մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասից բխող պատասխանատվությունը:

2014 թվականի հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտ քաղաքի Նաբերեժնայա փողոցում Սամվել Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող ու Բորիս Հարությունյանի վարման տակ գտնվող «Մերսեդես Բենց» մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի և «Սվետլանա Հարությունյան» ԱԶ-ին պատկանող ու Արտյոմ Նասիբյանի վարման տակ գտնվող «ՖՈՐԴ» մակնիշի 21 ՍԼ 286 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի մասնակցությամբ տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային

պատահար, ինչի արդյունքում ավտոմեքենաների սեփականատերերին պատճառվել է նյութական վնաս:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության պետի կողմից 14.11.2014թ հաստատված որոշմամբ հաստատվել է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման մեջ մեղավոր են <<Մերսեդես Բենց>> մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի վարորդ Բորիս Հարությունյանը և <<ՖՈՐԴ>> մակնիշի 21 ՍԼ 286 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի վարորդ Արտյոմ Նասիբյանը: Ընկերությունը 2015 թվականի փետրվարի 11-ին կայացրել է ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում, որի հիման վրա Արտակ Թարանյանին հատուցվել է նրան պատճառված 1.368.450 ՀՀ դրամի չափով վնասի 50 տոկոսը՝ 684.225 ՀՀ դրամ:

Գործող օրենսդրությամբ և կողմերի միջև ԱՊՊԱ պայմանագրով սահմանված է, որ ապահովագրական պայմանագրի կնքման, ինչպես նաև պայմանագրի գործողության ժամանակ ապահովադրի կողմից հայտնված տեղեկությունների փոփոխման դեպքում ապահովադիրը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել ապահովագրողին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու վրա, իսկ ԱՊՊԱ Պայմաններով պայմանագրի էական փոփոխություն է համարվում ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետողների մասին տեղեկությունը:

Այսինքն, ստացվում է, որ ապահովադիր Սամվել Հարությունյանը ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ կամ դրանից հետո պայմանագրի էական պայմանների, այն է՝ լիազորված տիրապետողների վերաբերյալ սուտ տեղեկատվություն է հայտնել ապահովագրին, որն էլ իր հերթին ապահովագրական ռիսկը ճիշտ չի գնահատել, որպիսի հանգամանքը հայտնի է դարձել ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո:

Վերաքննիչ դատարանը, սակայն, վերոգրյալը հաշվի չի առել, անտեսել է գործում առկա ապացույցները, կայացրել որոշում, որը չունի ոչ մի իրավական հիմնավորում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի որոշումը և հայցն ամբողջությամբ բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. Ընկերության և Սամվել Հարությունյանի միջև 2014 թվականի հունվարի 27-ին կնքված ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SE-336014 պայմանագրի /ապահովագրության վկայագրի/ համաձայն՝ 27.01.2014թ. – 27.01.2015թ. ապահովագրության ժամկետով ապահովագրվել է Սամվել Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող <<Մերսեդես-Բենց>> մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասից բխող պատասխանատվությունը: Գույքին պատճառված վնասների համար ապահովագրական գումարն ըստ յուրաքանչյուր ապահովագրական

պատահարի կազմում է 1.800.000 ՀՀ դրամ: Սամվել Հարությունյանից բացի, նշված տրանսպորտային միջոցը այլ լիազորված տիրապետող չի ունեցել:

2. 2014 թվականի հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտ քաղաքի Նաբերեժնայա փողոցի թիվ 12 շենքի դիմացի ճանապարհահատվածում վերոնշված մեքենայի ու Արտակ Թարանյանին պատկանող <<Ֆորդ>> մակնիշի 21 ՍԼ 286 հ/հ ավտոմեքենայի բախման արդյունքում Արտակ Թարանյանին պատճառվել է 1.368.450 ՀՀ դրամի չափով նյութական վնաս:

3. Ընկերությունը 11.02.2015թ. կայացրել է ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում ու Արտակ Թարանյանին հատուցել պատահարի հետևանքով վերջինիս պատճառված նյութական վնասի 50 տոկոսը՝ 684.225 ՀՀ դրամ:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերոնշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ժամանակ գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները, ի թիվս այլ հիմքերի, ծագում են նաև վնաս պատճառելու հետևանքով /345-րդ հոդվածի 2-րդ մաս/:

Նույն օրենսգրքի 983¹-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 9-րդ մասերի համաձայն՝ ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է: Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

Նույն օրենսգրքի 996-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գույքի ապահովագրության պայմանագրով մի կողմը /ապահովագրողը/ պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի /ապահովագրավճարի/ դիմաց պայմանագրով նախատեսված դեպքը /ապահովագրական պատահարը/ տեղի ունենալիս մյուս կողմին /ապահովադրին/ կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը /շահառուին/, հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված կամ ապահովադրի այլ գույքային շահերի հետ կապված վնասները /ապահովագրական հատուցումը/՝

պայմանագրով որոշված գումարի /ապահովագրական գումարի/ սահմաններում:

Նույն օրենսգրքի 1015-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովադիրը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին անհապաղ հայտնել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա: Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության պայմանագրում և ապահովադիրն տրված ապահովագրական կանոններով նախատեսված փոփոխությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել ապահովագրության պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապահովադիր կամ շահառուի կողմից այդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը և պահանջելու լուծել ապահովագրության պայմանագիրը և հատուցելու պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները կամ նվազեցնելու հատուցման չափը կամ չնվազեցնելու ապահովագրավճարը:

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատահականատվության պարտադիր ապահովագրության մասին>> ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի <<դ>> կետի, ինչպես նաև ԱՊՊԱ Պայմանների 9.1.2 կետի <<դ>> ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի /սուբրոգացիայի/ իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ /ապահովադիր/ նկատմամբ, եթե ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանը ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը:

Սույն գործով ներկայացված հայցի հիմքում, ինչպես նաև վճարել բողոքի հիմքում Ընկերությունը դրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության պետի կողմից 14.11.2014թ հաստատված որոշումը, համաձայն որի՝ 2014 թվականի հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտ քաղաքի Նաբերեժնայա փողոցում Սամվել Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող ու Բորիս Հարությունյանի վարման տակ գտնվող <<Մերսեդես Բենց>> մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի և <<Սվետլանա Հարությունյան>> ԱԶ-ին պատկանող ու Արտյոմ Նասիբյանի վարման տակ գտնվող <<ՖՈՐԴ>> մակնիշի 21 ՍԼ 286 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման մեջ մեղավոր

են <<Մերսեդես Բենզ>> մակնիշի 33 LS 322 հ/հ ավտոմեքենայի վարորդ Բորիս Հարությունյանը և <<ՖՈՐԴ>> մակնիշի 21 ՍԼ 286 հ/հ տրանսպորտային միջոցի վարորդ Արտյոմ Նասիբյանը:

Սակայն ինչպես հետևում է գործով հաստատված փաստերից, <<Մերսեդես-Բենզ>> մակնիշի 33 LS 322 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցը Սամվել Հարությունյանից բացի այլ լիազորված տիրապետող չի ունեցել, իսկ Բորիս Հարությունյանը հանդիսանում է ավտոտեխսպասարկման կետի տնօրեն, ում մոտ 2014 թվականի հոկտեմբերի 7-ին մեքենայի անսարքության պատճառով ներկայացել է Սամվել Հարությունյանը: Ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել Բորիս Հարությունյանի կողմից մեքենայի անսարքության պատճառը երևան հանելու համար մեքենայի շարժիչի գործողությունը ստուգելու ժամանակ: Ընդ որում, Սամվել Հարությունյանը վթարի պահին գտնվել է մեքենայում:

Գերագույն դատարանի գնահատմամբ նման հանգամանքներում Վերաքննիչ դատարանը, գործով պարզված հանգամանքների նկատմամբ կիրառելով կիրառման ենթակա իրավական ակտերը ու դրանք ճիշտ մեկնաբանելով, հանգել է հայցը մերժելու մասին իրավաչափ եզրահանգման: Հետևաբար՝ վճարել բողոքի պատճառաբանությունն այն մասին, թե իբր Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական ու դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, անհիմն են:

Հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, Գերագույն դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Գերագույն դատարանի լիազորությունը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից, որի բաշխման հարցին ստորադաս դատարանների կողմից տրվել է օրինական լուծում, իսկ վճարել բողոքը

ենթակա է մերժման, Գերագույն դատարանը գտնում է, որ պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2.Պետական տուրքի բաշխման հարցը համարել լուծված:

3.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅ

ԱՆ